ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա՝ **Կենսաբանություն**

Թեմա՝ «Կրտսեր դպրոցականի բնապահպանական դաստիարակության միջոցները և ձևերը: Ինչպիսի կարողունակություններ կձևավորվեն սովորողների մոտ բնապահպանական դաստիարակության ժամանակ»

Կատարող՝ **Հասմիկ Պետրոսի Բաղեյան**

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

Կենսաբանության ուսուցչուհի

Ղեկավար՝ **Գոհար Աճիկյան**

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Գլուխ առաջին

1.1ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ՁԱՎԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ---------- 4

1.2 Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ----------6

Գլուխ երկրորդ

2.1. Երկրորդ գլխի առաջին ենթագլխում ----------7

2.2. Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում ----------7

Եզրակացություն----------14

Գրականություն----------16

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցները և ձևերը
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Սովորողների մոտ ձևավորել բնապահպանական կարողունակությունը հայագիտության զարգացում, բնագիտական դաստիարակություն էկոլոգիական դաստիարակություն
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակ ության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Բնապահպանության դաստիարակության միջոցներ և ձևեր
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Պլանավորում (առարկայի դասավանդման մեթոդիկա)

Գլուխ առաջին

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ՁԵՎԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Թեմայի արդիականությունը. Կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցներն ու ձևերը առանցքային նշանակություն ունեն կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների համատեքստում:

Հաշվի առնելով երկրում բնապահպանական զարգացվածության ցածր մակարդակը՝ անհրաժեշտ է տարրական դպրոցում ուսումնասիրվող մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա, ես և շրջակա աշխարհը առարկաների ուսումնական ծրագրերում ներառել բնապահպանական բովանդակությամբ թեմաներ՝ որպեսզի արդյունվետ կերպով ձևավորվեն կրտսեր դպրոցականների բնապահպանական գիտակցությունը, բնապահպանական պատկերացումները, բնաճանաչողական կարողությունները, ինչը և կնպաստի նաև նրանց բնապահպանական մշակույթի ձևավորմանը:

Դրանով է պայմանավորված մեր ավարտական աշխատանքի ընտրությունը: Թեմայի վերաբերյալ անշուշտ կան լուրջ ուսումնասիրություններ թե՛ հայրենական հեղինակների և թե՛ արտերկրյա գիտնականների կողմից:

Աշխատանքն իրականացնելիս մենք հիմնական շեշտը դրել ենք կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության գործնական կողմի արդյունավետ իրականացման ու դրա արդյունավետության ապահովման միջոցների ու ձևերի առաջադրման վրա:

Ավարտական աշխատանքի նպատակն է՝

ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը և դրանում առկա տեսական դրույթների ու հայեցակարգային մոտեցումների հիման վրա առաջադրել և հիմնավորել կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցներն ու ձևերը.

Աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը, տեսական դրույթներն ու հայեցակարգային մոտեցումները,
- հիմնավորել միջառարկայական կապերի դերը կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման գործում,
- հենվելով մեր մանկավարժական փորձի և թեմայի վերաբեյալ տեսակետների, կարծիքների, գիտական մոտեցումների վրա՝ առաջադրել կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության արդյունավետ ձևեր և միջոցներ:

Ավարտական աշխատանքի տեսական նշանակությունը

կայանում է ավարտական աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ մեթոդաբանական հիմքերի վերլուծությանը և համակարգման մեջ, ինչպես նաև տեսականորեն հիմնավորվել են կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցներն ու ձևերը:

Աշխատանքի գործնական նշանակությունը

կայանում է նրանում, որ ավարտական աշխատանքի շրջանակներում առանձնացված և առաջադրված կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցներն ու ձևերը կարող են գործնական օգնություն լինել տարրական դպրոցի ուսուցչին:

Աշխատանքի կառուցվածքը.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքի առաջին գլխում տրված է կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը:

Դիտարկված են կրտսեր դպրոցակնների բնապահպանական դաստիարակության նպատակներն ու խնդիրները,մանկավարժական պայմանները, որոնցից են՝ **զարգացնող միջավայրի կազմակերպումը, բնապահպանական աշխատանքների պլանավորումը և բնապահպանական տեղեկատվության մշտական ա զարգացնող միջավայրի կազմակերպումը, բնապահպանական աշխատանքների պլանավորումը և բնապահպանական տեղեկատվության մշտական ապահովումը, ծանոթացնել բնության երևույթներին, տալ պարզագույն գիտական գիտելիքներ դրանց մասին պահովումը, ծանոթացնել բնության երևույթներին, տալ պարզագույն գիտական գիտելիքներ դրանց մասին :**

Նշվում է, որ անհրաժեշտ է երեխային սովորեցնել նկարագրել արտաքին աշխարհը և մասնավորապես այն ամենը, ինչ երեխան տեսնում է նկարում: Նա պետք է կարողանա զգալ առարկաների իրական հատկանիշները, տարբերակել լույսն ու ստվերը, գույնը ձևը և ծավալը, դադարի և շարժման վիճակները, ժամանակն ու տարածությունը, իր մարմնի մասերը և այլն:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում

բնութագրված են կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցների ու ձևերի առանձնահատկությունները՝ հենվելով ժամանակակից գիտնականների՝ կողմից սահմանված կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների վրա:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում

Ներկայացված և բնութագրված են կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցներն ու ձևերը,որոնց թվին մենք դասում ենք միջառարկայական կապերը՝ մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, ես և շրջակա աշխարհը առարկաների միջև, դասերը, արտառուսումնական պարապմունքներն ու միջոցառումները, բնապահպանական թեմաներով զրույցներն և բնաճանաչողական էքսկուրսիաները, ներդասարանային տարբերակված առաջադրանքները, բնապահպանական տոներն ու խաղերը, վիկտորինաները,խաչբառերը:Դպրոցի շրջապատում թփերի, ծաղկանոցների տնկման աշխատանքները և ծառերի խնամքը, թռչնաբների պատրաստումը, կենդանիների խնամքը և այլն: Կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության ձևերից են՝ արտադպրոցական բնապահպանական խմբակները, ինչպես նաև բնապահպանական ընկերությունները՝ կանաչ պարեկներ, պատանի բնասեր, բնապահպանների ակումբները և

այլն: թեմայով ավարտական աշխատանքի հետազոտությունն անցկացնելու համար կազմել ենք հարցաթերթիկներ ուղղված տարրական դասարանների դասվարներին և աշակերտներին: Հետազոտական աշխատանքը իրականացրել ենք՝ Գյումրու թիվ 11 հիմնական դպրոցի, 2-4 դասարանների աշակերտների հետ: Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել ենք զրույցի, հարցաթերթիկի մեթոդները: Հետազոտական աշխատանքում իրականացրել ենք սեմինար հանդիպում ուսուցիչների հետ, այնուհետև բաժանվել են հարցաթերթիկները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում

նկարագրված են կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցների ու ձևերի հիմնավորմանն ուղղված փորձարարական աշխատանքները:

թեմայով ավարտական աշխատանքի հետազոտությունն անցկացնելու համար կազմել ենք հարցաթերթիկներ ուղղված տարրական դասարանների դասվարներին և աշակերտներին: Հետազոտական աշխատանքը իրականացրել ենք՝ Գյումրու թիվ 11 հիմնական դպրոցի, 2-4 դասարանների աշակերտների հետ: Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել ենք զրույցի, հարցաթերթիկի մեթոդները: Հետազոտական աշխատանքում իրականացրել ենք սեմինար հանդիպում ուսուցիչների հետ, այնուհետև բաժանվել են

հարցաթերթիկները:Հետազոտության նպատակն էր պարզել՝ առարկան սովորողների բնապահպանական գիտելիքների յուրացմանը և հարստացմանը, Ինչպիսի՞ միջառարկայական կապեր են ստեղծվում տարրական դպրոցում՝ որպես կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության արդյունավետության ապահովման միջոց: Որքանո՞վ է առարկան հնարավորություն տալիս ուսուցչին լուծելու բնապահպանական դաստիարակության խնդիրները: Այդ նպատակի իրականացման համար մենք հարցումներ ենք իրականացրել ուսուցիչների և աշակերտների շրջանում: Ներկայացված են երկրորդ դասարանների աշակերտների հետ անցկացրած հարցման արդյունքները (հարցաթերթիկ 1): Առաջին հարցաթերթիկը, որն ուղղված էր աշակերտներին, իր մեջ ներառում է 10 հարց և նպատակ ուներ պարզելու բնապահպանական տարրական գիտելիքների առկայությունն ու յուրացվածությունը: Հարցումը կատարվել է 30 աշակերտների շրջանում.

Նպաստո՞ւմ է , արդյոք, առարկան սովորողների բնապահպանական գիտելիքների յուրացմանը և հարստացմանը, Ինչպիսի՞ միջառարկայական կապեր են ստեղծվում տարրական դպրոցում՝ որպես կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության արդյունավետության ապահովման միջոց: Որքանո՞վ է առարկան հնարավորություն տալիս ուսուցչին լուծելու բնապահպանական դաստիարակության

խնդիրները: Այդ նպատակի իրականացման համար մենք հարցումներ ենք իրականացրել ուսուցիչների և աշակերտների շրջանում: Ներկայացված են երկրորդ դասարանների աշակերտների հետ անցկացրած հարցման արդյունքները (հարցաթերթիկ 1): Առաջին հարցաթերթիկը, որն ուղղված էր աշակերտներին, իր մեջ ներառում է 10 հարց և նպատակ ուներ պարզելու բնապահպանական տարրական գիտելիքների առկայությունն ու յուրացվածությունը:

Հարցումը կատարվել է 30 աշակերտների շրջանում.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 1

1.Պետք է արդյո՞ք աղտոտել ջուրը. ա) այո բ) ոչ

2.Արդյոք պետք է աղտոտված ջրում լողալ. ա) այո բ) ոչ

3. Կարո՞ղ ենք մեր շրջապատը պահել մաքուր. ա) այո բ) ոչ

4.Կարո՞ղ է մարդ վնաս հասցնել բնությանը. ա) այո բ) ոչ

5. Մարդ կարո՞ղ է կանխել բնությանը հասցրած վնասը. ա) այո բ) ոչ

6.Արդյո՞ք ճիշտ է աղբը նետել հատակին. ա) այո բ) ոչ

7.Կարո՞ղ է ծխախոտի ծուխը վնաս պատճառել բնությանը. ա)այո բ)ոչ

8.Արդյո՞ք հարկավոր է կտրել ծառերը. ա)այո բ)ոչ

9.Դու կարո՞ղ ես պահպանել բնությունը. ա) այո բ) ոչ

10.Դու կարող ես նպաստել բնության պահպանմանը. ա) այո բ) ոչ

Հարցաշարի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ՝

Առաջին հարցին 30 աշակերտն էլ տվել է ոչ պատասխանը:

Երկրորդ հարցին 26 աշակերտ պատասխանել է ոչ, 4 աշակերտ՝ այո:

Երրորդ հարցին 18 աշակերտ պատասխանել է այո, 12-ը ոչ:

Չորրորդ հարցին 27 աշակերտ պատասխանել է այո, 3 աշակերտ ոչ;

Հինգերորդ հարցին աշակերտներից 15 պատասխանել է այո, մյուս 15՝ ոչ:

Վեցերորդ հարցին 30 աշակերտ տվել է ոչ պատասխանը:

Յոթերորդ հարցին աշակերտներից 14 հարցին տվել է այո պատասխանը , 16՝ ոչ պատասխանը:

Ութերորդ հարցին 7 աշակերտ պատասխանել է այո, 23 աշակերտ՝ ոչ:

Իններորդ հարցին 28 աշակերտ պատասխանել է այո, իսկ 2 աշակերտ՝ ոչ:

Տասներորդ հարցին 26 աշակերտ հարցին տվել է այո պատասխանը, 4 աշակերտ ոչ պատասխանը:

Հարցաթերթիկի արդյունքները ներկայացված են տրամագրով

Տրամագիր 1

առարկան հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել՝ շրջակա միջավայրի, կենդանի և կենդանական բնությանը վերաբերող պատկերացումներ և հասկացություններ, ձևավորել տիեզերքին վերաբերող դատողությունների, զարգացնել

աշխարհագրական գիտելիքներ, զարգացնել լեզվական կարողությունների և բառապաշար, ձևավորել բնապահպանական գիտակցության:

Այսպիսով ՝ վերլուծելով աշակերտների շրջանում հարցման արդյունքները՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ տարրական դպրոցի 2-րդ դասարանում ձևավորված է (մեր հարցման շրջանակներում) արդյունավետ առարկայացված հենք է բնապահպանական դաստիարակությանը խնդիրների լուծման համար է: առարկան հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել՝ շրջակա միջավայրի, կենդանի և կենդանական բնությանը վերաբերող պատկերացումներ և հասկացություններ, ձևավորել տիեզերքին վերաբերող դատողությունների, զարգացնել աշխարհագրական գիտելիքներ, զարգացնել լեզվական կարողությունների և բառապաշար, ձևավորել բնապահպանական գիտակցության:

Մեր կարծիքով բնապահպանական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է տարրական դասարաններում կիրառել ներդասարանային տարբերակված առաջադրանքներ, օգտագործել միջառարկայական կապերը, ինչպես նաև դասերի տարբեր ձևերի՝ խաղ - դասերի, էքսկուրսիա - դասերի կիրառությունը խիստ արդյունավետ, դրական արդյունք են տալիս:Այդպիսի դասընթացների ժամանակ ուսուցիչը պարզ է, թե ինչու որոշ երեխաներ բնությանը վերաբերվում են մեծ հետաքրքրությամբ և սիրով, բացասական արարքներ չեն կատարում, իսկ մյուսները իրենց բոլորովին այլ կերպ են դրսևորում:

Երկրորդ հարցաթերթիկը ներառում է 3 հարց, լրացվել է 10 դասվարների կողմից. նպատակն էր բացահայտել, թե տարրական դպրոցում ուսումնասիրվող առարկաները որքանով են դպրոցականների՝ բնապահպանական դաստիարակության խնդիրների լուծմանը:

Հարցաթերթիկ

1.Հաճա՞խ եք դպրոցում կազմակերպում արտադասարանական բնապահպանական բովանդակությամբ միջոցառումներ.

ա) յուրաքանչյուր ամիս բ) երբեք գ) կիսամյակը մեկ

2.Ուսումնական գործընթացում հաճա՞խ եք կազմակերպում բնապահպանական բովանդակությամբ էքսկուրսիաներ .

ա) յուրաքանչյուր ամիս բ) կիսամյակը մեկ գ) երբեք

3.Ստեղծո՞ւմ եք բարենպաստ պայմաններ աշակերտների բնապահպանական գիտակցությունը, արժեքային կողմնորոշումները և բնապահպանական մշակույթը զարգացնելու նպատակով.

ա) այո, հաճախ բ) ոչ գ) ոչ միշտ

4.Հաճա՞խ եք աշակերտների հետ ունենում բնապահպանակա խնդիրներին, բնության մեջ էկոլոգիակապես ճիշտ վարքագծի դրսևորմանը նվիրված զրույցներ.

ա) այո բ) ոչ գ) երբեմն

5.Դասերի ինչպիսի՞ ձևեր եք նախընտրում սովորողների բնապահպանական դաստիարակության իրականացման համար.

ա) զրույցներ բ) բանավեճեր գ)բնաճանաչողական էքսկուրսիաներ:

արցաշարի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ՝

Առաջին հարցի ա) տարբերակը ընտրել են 7 ո ւսուցիչ, բ) տարբերակը չի ընտրել ոչ մի ուսուցիչ, գ) տարբերակը ընտրել են 3 ուսուցիչ:

Երկրորդ հարցի ա) տարբերակը ընտրել է 7 ո ւսուցիչ, 3 ուսուցիչ ընտրել է բ) տարբերակը, գ) տարբերակը ընտրող չի եղել:

Երրորդ հարցին այո պատասխանել է 6 ուսուցիչ, ոչ պատասխանել է 1 ուսուցիչ, երբեմն պատասխանել է 3 ուսուցիչ:

Չորրորդ հարցին այո պատասխանել է 10 ուսուցիչ, բ և գ հարցերին պատասխանող չի եղել:

Հինգերորդ հարցի ա) տարբերակը ընտրել են 10 ուսուցիչ, բ և գ տարբերակներին պատասխանող ուսուցիչ չի եղել:

Հարցաթերթիկի արդյունքները ներկայացնում ենք տրամագրում:

Տրամագիր 2

Այսպիսով ՝ վերլուծելով հարցման արդյունքները՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ տարրական դասարանների ուսուցիչների պատասխանների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարրական դպրոցում դասավանդող առարկաներն և արտադասարանական միջոցառումներն ունեն բնապահպանական մեծ ներուժ նպաստելու կրտսեր դպրոցականների

բնապահպանական դաստիարակության խնդիրների լուծմանը: Թեմայով սեմինարի բովանդակությունը: Յուրաքանչյուր մանկավարժ գիտի, որ բնապահպանական դաստիարակությունը նպաստում է բնության հետ մարդու հարաբերությունների ներդաշնակության, բնապահպանական գիտակցության և բնապահպանական մծակույթի ձևավորմանը: Մենք արդեն նշել ենք, որ բնապահպանական կրթության ողջ համակարգի, այդ թվում նաև սովորողների արտաուսումնական, արտադպրոցական գործունեությունը նպատակամղված է սովորողների բնապահպանական դաստիարակության խնդիրների լուծմանը:

Բացի հարցաշարերի արդյունքներից , մենք փորձարկվող դպրոցում կազմակերպել ենք նաև գործնական սեմինար «Բնապահպանական դաստիարակությունը դպրոցում» թեմայով: Ներկայացնում ենք նաև ուսուցիչների շրջանում անցկացրած թեմայով սեմինարի բովանդակությունը: Յուրաքանչյուր մանկավարժ գիտի, որ բնապահպանական դաստիարակությունը նպաստում է բնության հետ մարդու հարաբերությունների ներդաշնակության, բնապահպանական գիտակցության և բնապահպանական մծակույթի ձևավորմանը: Մենք արդեն նշել ենք, որ բնապահպանական կրթության ողջ համակարգի, այդ թվում նաև սովորողների արտաուսումնական, արտադպրոցական գործունեությունը նպատակամղված է սովորողների բնապահպանական դաստիարակության խնդիրների լուծմանը:

Դեռևս վաղ ժամանակներից սկսած՝ տարբեր մանկավարժներ արժևորել և մեծ տեղ են տվել բնապահպանական դաստիարակությանը: Եթե այս ընթացքում բնապահպանական դաստիարակությունը չկարևորեին, այն չէր լինի այսքան կարևոր և իր հատկանշական տեղը չէր զբաղեցնի կրտսեր դպրոցականների ընդհանուր դաստիարակության գործընթացում: Վերջին տասնամյակի ընթացքում մի շարք հետազոտություններ են իրականացվել դպրոցականների բնության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցերի, դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության վերաբերյալ: Լ.Թ.Ասատրյանը, Լ.Գ.Ավանեսյանը, Մ.Ա. Ասատրյանը, Փ.Ս.Սարգսյանը և այլոք քննարկելով սովորողների բնապահպանական կրթության և դաստիարակության հարցերը, իրավացիորեն նշել են, որ կրտսեր դպրոցականների բնապահպանական կրթության արդյունավետությունը բավարար է այսօրվա բնապահպանական խնդիրները լիարժեք լուծելու համար:

Ինձ շատ հետաքրքիր է ձեր մոտեցումը բնապահպանական դաստիարակության հայեցակարգային վերլուծության վերաբերյալ, թե՞ տարրական դպրոցում դասավանդող մայրենի, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը, տեխնոլոգիա, կերպարվեստ առարկաները նպաստում երեխաների բնապահպանական դաստիարակության զարգացմանը: Ուզում եմ հայտնել իմ շնորհակալությունը ձեզ ձե՞ր ժամանակից ինձ տրամադրելու, լսելու և աջակցելու համար: Ինձ շատ հետաքրքիր և հաճելի կլինի լսելու նաև ձե՞ր կարծիքը բնապահպանական դաստիարակության գործընթացի իրականացման միջոցների ու ձևերի վերաբերյալ:

Եզրակացություն

Այսպիսով՝ թեմայի շրջանակներում մենք բազմակողմանի ուսումնասիրել ենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են կրտսեր դպրոցականների առջև ծառացած բնապահպանական խնդիրները, շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի ձևավորումը, ճիշտ քաղաքացու դաստիարակումը, հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատումը : Անդրադարձ կատարեցինք կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության միջոցներին, առանձնահատկություններին, ինչպես նաև կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության արտաուսումնական և արտադասարանական պարապմունքների գործընթացին: Աշխատությունում անդրադարձ ենք կատարել նաև կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության հայեցակարգային մոտեցումների վերլուծությանը:

Մեր կողմից իրականացրած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում արել ենք մի շարք հետևություններ, մասնավորապես՝ Հանրակրթական դպրոցներում ուսուցանվող Ես և շրջակա աշխարհը առարկան նպաստում է աշակերտների բնապահպանական դաստիարակությանը: Բնապահպանական դաստիարակության հիմքում ընկած է ինտեգրատիվ, միջառարկայական բնույթը պահանջող, աշխարհայացքային նշանակություն ունեցող, գիտելիքների և բարոյակամային աշխատանքային որակների բարդ համակարգը, որը ենթադրում է բնապահպանական դաստիարակության ճկուն ձևերի մշակում՝ միջառարկայականության հիմքի վրա:: Մանկավարժները գտնում են, որ գոնե յուրաքնչյուր ամիսը մեկ պետք է կազմակերպել արտադասարանական միջոցառումներ, քանի որ դրանց դպրոցականները ներգրավվում են կամավորության սկզբունքով՝ ստեղծագործական մեծ ակտիվություն ցուցաբերելով: Մանկավարժներից գտնում էին, որ զրույցի միջոցով կարող են երեխաներին հանգեցնել բնապահպանական ճիշտ դաստիարակությանը: բնապահպանական կարողությունները զարգացնելու նպատակով աշակերտների համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ, քանի որ դրանք նպաստում են կրտսեր դպրոցականների

բնապահպանական դաստիարակությանն ու մարդ-բնություն փոխադարձ կապին առարկան ուսումնասիրելիս: Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի բովանդակության ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել որոշ

սկզբունքներ, ելակետային դրույթներ, նորմատիվային մի շարք պահանջներ, որոնք համապատասխանում են հասարակության, գիտության զարգացման մակարդակին:

Ամփոփելով վերը շարադրածը արել ենք մի շարք եզրահանգումներ՝ Յուրաքանչյուր պետության կայացման համար առաջին հերթին անհրաժեշտ է կայացած հասարակություն, իսկ հասարակության կայացման լավագույն գործիքն դպրոցն է: Ժամանակակից աշխարհում,երբ օրեցօր մեծանում է հասարակության կայացման ներգործությունը շրջակա միջավայրի վրա, այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության բնապահպանական կրթության անհրաժեշտությունը; Կրտսեր դպրոցականները էկոլոգիայի մասին հիմնական տեղեկություն ստանում են առարկան ուսումնասիրելիս: Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի բովանդակության ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել որոշ սկզբունքներ, ելակետային դրույթներ, նորմատիվային մի շարք պահանջներ, որոնք համապատասխանում են հասարակության, գիտության զարգացման մակարդակին:

Բնապահպանական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական բնապահպանական գիտելիքներով և նոր բնապահպանական մտածողությամբ: Դպրոցում այն կարելի է կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով:Դասի ընթացքում ընտրել ուսուցման ձևերից՝ միջոցառումները, արշավների կազմակերպումները բնության մեջ ուսումնական ճամփորդությունները՝ հիդրոէլեկտրոկայաններ, ջերմակայաններ, արգելավայրեր և արգելոցներ: Կրտսեր դպրոցականների բնապահպանական կրթության գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար ներդասարանային տարբերակված ուսուցման միջոցները, տարբեր մակարդակի առաջադրանքների համակարգի մշակումը, միջառարկայական կապերի կիրառումը, դասերի տարբեր ձևերի՝ խաղ - դասերի, էքսկուրսիա - դասերի կիրառությամբ խիստ կարևոր են:

Գրականություն

1. Կենսաբանություն 7-րդ դաս. հեղինակ. Է.Ս. Գևորգյան, Ֆ.Դ.Դանիելյան, Ա.Հ.Եսայան էջ՝ 127-144, էջ.149-172

2. Բնագիտություն 5-րդ դաս. Հեղինակ. Ղազարյան, Թռչունյան, Մելիքյան էջ 70-119 3.

3.Երկրագնդի ոլորտների փոխադարձ կապերը Հեղինակ Վարդանյան էջ 151-155

Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)

Օրինակ՝

1. Թադեւոսյան Գ., Որակական սոցիալական հետազոտություններ. Տեսություն, մեթոդաբանություն եւ մեթոդ: Ուսումնական ձեռնարկ, Երեւան, Երեւանի համալս. հրատ., 2006
2. ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոն, ԴԱՏԱ գործընկերներ.(2021). Սոցիալական հետազոտութ յան էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց. Երեւան: «ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու եւ թափանցիկ գործունեության համար» ծրագիր
3. Teaching methods overview, https://fctl.ucf.edu/teaching-resources/teaching-strategies/teaching-methods-overview/,